

ԱՎՏՈԳԱԶԱԼ ՑԱՎՈՐՄԱՆ ՃՆՇԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ
ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ապագա, Էջմիածնի խճուղի 47 հողամաս



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ձեռնարկող՝ Արթուր Դավիթի Հարությունյան

Կատարող՝ Արթուր Էդգարի Մուրադյան

Երևան 2025թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	4-7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	9
1.1. Ձեռնարկողի մասին տեղեկություն	9
1.2. Հապավումներ	9
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	10-14
2.1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը	15
2.2. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը	15-16
2.3. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.)	16
2.4. Հողային օրենսգիրք (2001)	16
2.5. Թափոնների մասին ՀՀ օրենք (2004)	17
2.6. Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)	17
2.7. Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք (1994)	17
2.8. Պատմական և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենք (1998)	18
2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք	18
2.10. Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք	19
2.11. Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք	20
3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	21
3.1 Համայնքի բնութագիրը	21
3.1.1 Աշխարհագրական նկարագիրը	21
3.1.2 Պատմական ակնարկ	21-24
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ	25-44
4.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	25
4.1.2. Նախատեսվող գործունեության նկարագիր	
4.1.3. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ	36
4.1.4. Հողային աշխատանքներ	36
4.1.5. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	37
4.1.6. Գազամատակարարում	38
4.2. Գազալցակայանի տեխնիկական բնութագրերը	39
4.3. Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը	40
4.4. Վնասակար նյութերի հաշվարկային արտանետումները շահագործման ընթացքում	41
4.5. Ջրային պաշարների պահպանություն	41
4.6. Կոմպրեսորների հովացում	41
4.7. Ջրամատակարարում և ջրահեռացում	43
4.8. Թափոններ	44
4.9. Էլեկտրամատակարարում	44
4.10 Աղմուկ և թրթռում	44

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____ 45-59

5.1. Դիտարկվող տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը _____	45
5.2. Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը _____	45
5.3. Տարածաշրջանի հողերի նկարագիրը _____	47
5.4. Սեյսմիկ կառուցվածք, արտաժին երկրաբանական երևույթներ _____	48
5.5. Կլիման և օդերևութաբանական պայմանները _____	48
5.6. Ջերմաստիճանը _____	49
5.7. Խոնավությունը _____	49
5.8. Մթնոլորտային տեղումները _____	50
5.9. Ջրային ռեսուրսներ _____	51
5.10. Հողածածկ _____	51
5.11. Կենսաբազմազանություն _____	51
5.11.1 Բուսական աշխարհը _____	51
5.11.2 Կենդանական աշխարհը _____	54
5.12. Բնության հատուկ պահպանվող տարածքներ _____	57
5.13. Պատմամշակութային հուշարձաններ _____	57

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____ 59-68

6.1 Ռիսկերի գնահատում _____	60
6.2 Արտանետումների աղբյուրները _____	60
6.3 Թափոնների կառավարում _____	61
6.4 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն _____	61
6.4.1 Ջրային ռեսուրսներ _____	62
6.4.2 Հողային ռեսուրսներ _____	62
6.4.3 Մթնոլորտային օդ _____	64
6.4.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը _____	65
6.4.5 Աղմուկ _____	66
6.4.6 Տարածքների բարեկարգում, կանաչապատում _____	67

7. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ _____ 67

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ _____ 69-71

9. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ _____ 72-73

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ _____ 74

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ _____ 75-87

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությային փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հայուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը:

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը:

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը:

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն:

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը:

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության:

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա:

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ:

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու

հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գեներտիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոպենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոպենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան՝ բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական

բնական օբյեկտ.

պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա բնակավայրի էջմիածնի խճուղի թիվ 47 հողամասում (04-012-0202-0027 կադաստրային ծածկագիր) նախատեսվում է իրականացնել ավտոգազալիցքավորման ճնշակայանի (ԱԳԼԾԿ) կառուցման աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի (ընդունված 03.05.2023թ.) 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի թ) ենթակետի համաձայն, դասակարգվել է որպես «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության:

Փորձաքննությունն իրականացվում է վերոհիշյալ օրենքի 16-րդ և 17-րդ հոդվածների ընթացակարգերով:

ՇՄԱԳ հաշվետվությունում մանրամասն ներկայացված է նախատեսվող գործունեությունը, գնահատվել են բոլոր այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ գործունեության արդյունքում, մշակվել է դրանց ժամանակին ու ճիշտ կանխարգելման կամ մեղմացնող միջոցառումների պլանը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի անվանումը և գործառնական հասցեն

Ձեռնարկող՝ Արթուր Դավիթի Հարությունյան

Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Ապագա բնակավայր, 20-րդ փողոց տուն թիվ 2

Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Ապագա բնակավայր, Էջմիածնի խճուղի թիվ 47 հողամաս

Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Ապագա բնակավայր

Աշխատանքային նախագծի մշակող՝ «ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊԸ

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ փակ բաժնետիրական ընկերություն

ՍՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՇՄԱԳ հաշվետվության նպատակն է ներկայացնել նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխություններն ու առաջարկել դրանց մեղղման կամ չեզոքացման միջոցառումների պլան:

Հաշվետվությունը կազմելիս ուսումնասիրվել է միջազգային լավագույն փորձը, օգտագործվել են բնապահպանական ուղեցույցների, ձեռնարկների ինչպես նաև մեթոդական ցուցումների դրույթներն ու կարգավորումները:

ՇՄԱԳ հաշվետվության կազմն ու բովանդակությունը համապատասխանեցվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքին (ընդունվել է 03.05.2023թ.):

ՇՄԱԳ հաշվետվությունը կազմելիս հաշվի է առնվել ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) և շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված ՀՀ Միջազգային պարտավորություններով ստանձնած պահանջները:

ՇՄԱԳ հաշվետվություն կազմելիս օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- տեղամասի երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի ձևաբանության, կլիմայական պայմանների, ջրաբանության, հողային ռեսուրսների, կենդանական և բուսական աշխարհի, պատմամշակութային և բնական հուշարձանների, համայնքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների վերաբերյալ առկա հրատարակված կամ ինտերնետ հասանելիություն ունեցող աղբյուրներ՝ հողվածներ, հաշվետվություններ, թեմատիկ վերլուծություններ, թեմատիկ քարտեզներ, սխեմաներ և այլն.

- տեղամասի աշխատանքային նախագիծը.

- շրջանում կատարված այցելությունների, հարցումների և հետազոտությունների ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը.

- նախագծի շահագրգիռ կողմերի հետ իրականացված բանակցություններն ու քննարկումները.

- ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է «ՏՐԱՆՍՆԱԽԱԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊ ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա և ներկայացվում է օրենքով սահմանված փորձաքննության.

- ՇՄԱԳ հաշվետվության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել, բոլոր հնարավոր ուղակի և անուղակի բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա, որոնք առաջանալու են ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա բնակավայրի էջմիածնի խճուղի թիվ 47 հողամաս հասցեում ԱԳԼՃ կայանի շահագործման հետևանքով:

Ազդեցությունների աղբյուրների և չափի գնահատումը հնարավորություն է տվել մշակել համապատասխան միջոցառումների ծրագրեր, որոնցով հնարավորինս կանխվելու է վնասակար ազդեցություններն ու ապահովվելու է կենսոլորտի կայունության պահպանումն ու մարդու սոցիալ-տնտեսական զարգացման բնականոն ընթացքը:

Ձեռնարկողն իր գործունեության ընթացքում խստագույնս հետևելու է օրենսդրական գործիքակազմին, որոնք կարգավորվում են ՀՀ-ում սկսած 1991 թվականից մինչև այժմ ընդունված բազմաթիվ օրենսդրության, օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և կանոնակարգերի միջոցով:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների և օրենսդրության ցանկը ներկայացված է ստորև.

- **ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք** (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները.

- **ՀՀ Հողային օրենսգիրք** (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը.

- **«Թափոնների մասին» ՀՀ օրենքը** (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.) կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը.

- **ՀՀ Ջրային օրենսգիրք** (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները.

- **ՀՀ Անտառային օրենսգիրք** (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները.

- **«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք** (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության

բնագավառում.

- **«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք** (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը.

- **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը** (ՀՕ-522-Ն, ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որը կարգավորում է մթնոլորտային օդի օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները.

- **«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք** (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները.

- **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները.

- **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը** (ՀՕ-150, 03.05.2023թ.) կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լուսման իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները.

- **ՀՀ Կառավարության 20.01.2005 թ.-ի թիվ 64-Ն որոշում**, որով սահմանվել է ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները.

- **ՀՀ Կառավարության 01.18.2007 թ. թիվ 205-Ն որոշում**.

- **ՀՀ Կառավարության 30.05.2002թ. թիվ 927-Ն որոշում.**
- **ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում,** որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ.
- **ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի թիվ 781-Ն որոշում,** որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը.
- **ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի թիվ 191-Ն որոշում,** որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը.
- **ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի թիվ 1404-Ն որոշում,** որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները.
- **ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի թիվ 71-Ն որոշում,** որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը.
- **ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի թիվ 72-Ն որոշում,** որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը.
- **ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի թիվ 1059-Ա որոշում,** որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները.
- **ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի թիվ 967-Ն որոշում,** որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի.
- **«Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.09.2011 թ. թիվ 1396-Ն որոշումը.**
- **«Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 10 հունվարի 2013 թվականի թիվ 22-Ն որոշումը.**
- **«Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման**

թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին» **ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի թիվ 676-Ն որոշում.**

- «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» **ՀՀ կառավարության 02.11.2017թ թիվ 1404 -Ն որոշում.**

- «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» **ՀՀ կառավարության 18.08.2021թ. թիվ 1352-Ն որոշում.**

- «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի թիվ 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» **ՀՀ կառավարության 21.10.2021թ. թիվ 1733-Ն որոշում.**

- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 365-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին 07.01.2022թ., թիվ 6-Ն հրաման.

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25 հոկտեմբեր 2022թ. թիվ 369-Ն հրաման**

Միջազգային համաձայնագրեր

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)

- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)

- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)

- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)

- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)

- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ)

- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)

- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)

- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (վավերացվել է ՀՀ կառավարության կողմից 2003թ.-ին)

- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել)

2.1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը

Բնապահպանական խնդիրների վերաբերյալ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են երեք հոդվածներ.

Հոդված 10. Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունն ու վերարտադրությունը և բնական պաշարների խելամիտ օգտագործումը:

Հոդված 31. Յուրաքանչյուր ոք ունի իրեն պատկանող գույքը ազատորեն տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավունք: Գույքի իրավունքը չպետք է կիրառվի շրջակա միջավայրի վրա վնաս պատճառելու կամ այլ անձանց, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի խախտման համար:

Հոդված 33.2. Յուրաքանչյուր ոք ունի իր առողջության և բարեկեցության համար բարենպաստ միջավայրում ապրելու իրավունք և պարտավոր է պաշտպանել և կատարելագործել այն անձամբ կամ ուրիշների հետ միասին: Պետական պաշտոնյաները պատասխանատվություն են կրում բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելու և դրանով հասանելիության հերքելու համար:

2.2. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (ՇՄԱԳՓ) օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (ՇՄԱԳՓ) մասին օրենքը, որն ընդունվել է 2023թ-ին, սահմանում է նախագծային գործունեության և հայեցակարգային փաստաթղթերի պետական փորձաքննության իրականացման իրավական հիմունքները, ինչպես նաև ներկայացնում է ՀՀ-ում իրականացվող տարբեր ծրագրերի և գործունեության Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացի հիմնական քայլերը:

ՇՄԱԳՓ-ն պետության կողմից անցկացվող պարտադիր գործունեություն է:

Օրենքի 2-5 հոդվածներում սահմանված են տարբեր ծրագրերի և ոլորտային զարգացման հայեցակարգերի (օր.՝ էներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, շինանյութերի արդյունաբերություն, մետալուրգիա, փայտի և թղթի արդյունաբերություն, գյուղատնտեսություն, սննդի արդյունաբերություն և ձկնային տնտեսություն, ջրային տնտեսություն, էլեկտրատեխնիկական արտադրություն, ենթակառուցյուն, սպասարկման ոլորտ, զբոսաշրջիկություն և հանգիստ, և այլն) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտադիր գործընթացի իրականացման հիմնական իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքները:

Ի լրումն նշվածի, ՇՄԱԳՓ գործընթացը կարող է նախաձեռնվել նաև այն ծրագրերի համար, որոնք չեն գերազանցում նվազագույն չափաքանակների պահանջները:

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը անհրաժեշտության դեպքում կարող է նախաձեռնել շրջակա միջավայրի ազդեցության վերանայում:

Օրենքը պահանջում է, որ ցանկացած տնտեսական գործունեության, պլանի կամ ծրագրի իրականացման համար ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Պետական

բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի կողմից ստացվի դրական եզրակացություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

Օրենքն արգելում է, առանց ՇՄԱԳՓ դրական եզրակացության որևէ գործունեություն:

ՇՄԱԳՓ մասին օրենքն ընդհանուր առմամբ համահունչ է միջազգային կոնվենցիաների և զարգացմանն աջակցող կազմակերպությունների (օրինակ՝ Համաշխարհային բանկ (WB), ԱՄՆ ՄԶԳ (USAID), ԵԽ (EU), ՀՄԿ (MCC), և այլն) բնապահպանական գնահատման մոտեցումներին:

Սույն Օրենքը նաև ապահովում է հանրության ներգրավումն ու մասնակցությունը ՇՄԱՓ բոլոր փուլերին:

Փորձաքննության գործընթացների լիարժեքությունն ապահովելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու ու այլ տեղեկատվություն ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում լիազորված մարմնի հիմնավորված որոշմամբ փորձաքննության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 աշխատանքային օր:

2.3. ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (2011թ.)

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28-ին ընդունված «Ընդերքի մասին օրենսգրքով»:

Ի կատարումն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի և 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետի պահանջների ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարը 30.12.2011թ. թիվ 249-Ն հրամանով հաստատել է «Ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացվող բնության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատմանը, բնության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը և հանքի փակման ծրագրին ներկայացվող պահանջներ»-ը:

Օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում առաջացող բնապահպանական և անվտանգության խնդիրների կարգավորման և դրանց արդյունավետ վերահսկման նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգը» (10.01.2013 թիվ 22-Ն):

2.4. Հողային օրենսգիրք (2001թ.)

Հողային օրենսգիրքը սահմանում է տարբեր նպատակների (գյուղատնտեսություն, քաղաքացիական շինարարություն, արդյունաբերություն և հանքարդյունաբերություն,

էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդակցության միջոցներ, տրանսպորտ և այլն) համար ծառայող պետական հողերի օգտագործման կառավարումը:

Օրենսգիրքը սահմանում է նաև հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային հողերը, ինչպես նաև անդրադառնում է հողերի պահպանությանն ուղղված միջոցառումներին, պետական/տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների իրավասություններին:

Օրենսգրքի համաձայն օգտակար հանածոների արդյունահանման համար հողամասերը տրամադրվում են ընդերքի օգտագործման իրավունք հաստատող փաստաթղթերին համապատասխան (հոդված 13.6):

2.5. Թափոնների մասին օրենք (2004թ.)

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, տեղափոխման, կուտակման, մշակման, կրկնակի օգտագործման, հեռացման, ծավալի փոքրացման խնդիրներին վերաբերվող իրավական և տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա դրանց բացասական ազդեցության կանխումը: Օրենքը սահմանում է թափոնների օգտագործման օբյեկտները, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական ստանդարտավորման սկզբունքները, գույքագրումը, վիճակագրական տվյալների ներմուծումը, պահանջների իրականացման մեխանիզմները, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնների պետական մոնիտորինգի իրականացման սկզբունքները, թափոնների քանակի կրճատմանն ուղղված գործողությունները՝ ներառյալ բնօգտագործման վճարները, ինչպես նաև իրավական և ֆիզիկական անձանց կողմից բնությանը և մարդու առողջությանը պատճառված վնասի դիմաց փոխհատուցումը, թափոնների օգտագործումը, պետական մոնիտորինգի իրականացման պահանջները և իրավական խախտումները:

Օրենքը սահմանում է նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական անձանց ու անհատների իրավունքներն ու պարտականությունները:

2.6. Բնապահպանական վերահսկողության մասին օրենք (2005թ.)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները և սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները, կարգերը, պայմանները, դրանց հետ կապված հարաբերությունները և բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

2.7. Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը (1994թ.)

Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

Համաձայն այս օրենքի, հանքարդյունահանողը՝ արդյունահանումն, ինչպես նաև թափոնների տեղափոխումն ու ժամանակավոր պահումն իրականացնի նվազագույնի հասցնելով փոշու և այլ մթնոլորտային արտանետումները:

Նախագծով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

2.8. Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին օրենք

Օրենքը սահմանում է ՀՀ հուշարձանների պահպանման և օգտագործման իրավական և քաղաքական հիմքերը, կարգավորում պահպանման և օգտագործման գործողությունների միջև հարաբերությունները:

Օրենքի համաձայն, Լիազոր մարմինը կարող է հաստատել զարգացման գործողությունները, ներառյալ՝ շինարարությունը, եթե մշակման համար նախատեսվող տարածքներում տեղակայված է պատմական կամ մշակութային հուշարձան:

Օրենքը պահանջում է, որ պատմական կամ մշակութային հուշարձանների պահպանման միջոցները ձեռնարկվեն նախքան որևէ գործողություններ սկսելը:

Օրենքի համաձայն հուշարձանի պահպանության բացառիկ միջոցը ենթակա է Հայաստանի Հանրապետության կառավարության կամ տարածքային կառավարման հաստատմանը, կախված այն հանգամանքից, թե արդյո՞ք այդ հուշարձանը հանրապետական կամ տեղական նշանակություն ունի: Նման հաստատումը տրվում է նախարարության առաջարկությամբ:

2.9. Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենքը սահմանում է պահպանվող տարածքների ստեղծման ընթացակարգերը և ղեկավարում դրանց կառավարումը:

Սույն օրենքի նպատակը բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, էսթետիկ, առողջապահական, կլիմայի կարգավորման, վերականգնողական և հոգևոր արժեքների բնութագիր ներկայացնող Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, բնապահպանական համալիրների և առանձին օբյեկտների կայուն զարգացման, վերականգնման, պահպանման

և օգտագործման համար պետական քաղաքականության իրավական սկզբունքների մասին է:

Օրենքի նպատակներն են՝ պահպանել բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը, պահպանել ազգային նշանակության բնական հուշարձանները, պահպանել երկրի կենսաբազմազանությունը, վերահսկել բնական միջավայրի օգտագործումը, նպաստել բնապահպանական կրթության և հանրային իրազեկության բարձրացմանը և ապահովել բնական ռեսուրսների կորստի ճանաչումը իրավական դաշտում:

Օրենքի համաձայն, պահպանվող տարածքները, որոնք իրենց կարգավիճակով դասակարգվում են որպես.

- ա) կենսոլորտային արգելոց / արգելավայր,
- բ) պետական արգելոց,
- գ) ազգային պարկ,
- դ) բնական պարկ,
- ե) պետական արգելավայր,

զ) բնության հուշարձանը պետք է սահմանվի կառավարության որոշմամբ, և որ դրանց կառավարման ընդհանուր պատասխանատվությունը գտնվում է ՇՄՆ- ի կողմից:

Օրենքը վերաբերում է նաև հատուկ պահպանվող տարածքների պետական ցանկի մշակմանը, պահպանվող տարածքների նույնականացմանը և զննումների մեխանիզմներին և պահպանվող տարածքի տարբեր տեսակների կարգավիճակի և կառավարման ռեժիմներին:

Այնուամենայնիվ, սույն օրենքը չի անդրադառնում մի շարք կարևոր հարցերի, ինչպիսիք են կենսաբազմազանության սոցիալ-տնտեսական օգուտները, հողի սեփականաշնորհումը և մասնավոր հատվածի դերը և իրավունքները և, հետևաբար, վերանայման կարիք ունի: Օրենքը սահմանում է, որ հատուկ պահպանվող տարածքների տարածքում արգելվեն հետևյալ գործողությունները.

- ա) որս և ձկնորսություն
- բ) բույսերի, ծաղիկների կամ սերմերի հավաքում
- գ) անտառահատման կամ փայտամթերման գործընթացը
- դ) արածում
- ե) նոր բուսական և կենդանական աշխարհի տեսակների ներդնում կամ հարմարեցում
- զ) հանքավայրի կամ հանքարդյունահանման օգտագործում

2.10. Բուսական աշխարհի մասին օրենք

Բուսական աշխարհը պայմանավորում է մարդու և կենդանիների գոյությունը երկրի վրա: Դա ազգային հարստություն է և երկրի սոցիալական, տնտեսական կայուն զարգացման ու բարեկեցության կարևորագույն հիմքերից մեկն է: Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

Բուսական աշխարհի մասին օրենքը նպատակ ունի ապահովել բույսերի կայուն պահպանումը, դրանց գենետիկական բազմազանությունը և բնական միջավայրը, բնական բույսերի պոպուլյացիայի կայուն օգտագործման համար գիտական գնահատականների մակարդակների մշակումը, բուսական աշխարհի կայուն պահպանումը ապահովելու և պաշտպանելու բույսերի պահպանման և կառավարում գործում ներգրավված անձանց իրավունքները:

Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ կարմիր գրքում գրանցված բույսերի օգտագործումը թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ գիտահետազոտական, մշակութային մեջ ներդրման և բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակներով՝ բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնի թույլտվությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Տեղափոխումը պետք է համապատասխանի Կառավարության «Բուսական աշխարհի օբյեկտների պահպանման և դրանց բնական պայմաններում վերարտադրության համար օգտագործման կանոնակարգի հաստատման մասին» 2014թ. հուլիսի 31-ի թիվ 781 որոշման համաձայն: Օրենքով թույլատրվում է Կարմիր գրքում գրանցված բույսի տեղափոխումը, միայն այն դեպքում, եթե դա արվում է դրա պահպանման և գիտական հետազոտության նպատակով:

2.11. Կենդանական աշխարհի մասին օրենք

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհը ազգային հարստություն է և պետության բացառիկ սեփականությունը: Այն բնության ամբողջականությունն ապահովող առավել կարևոր տարրերից է, դրա էկոլոգիական հավասարակշռության և ներդաշնակ զարգացման երաշխիքը:

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

Կենդանական աշխարհի մասին օրենքը նպատակ ունի՝ ապահովել կենդանիների պահպանությունը, դրանց գենետիկական բազմազանությունը, պահպանել կենդանիների պոպուլյացիայի ամբողջականությունը, պահպանել կենդանիներին խուսափելու անհարմարություններից, պաշտպանել միգրացիոն երթուղիները և կարգավորել կենդանիների տեսակների օգտագործումը:

Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակ վայրերում վայրի կենդանիների արտահանումը, ներմուծումը, պահպանումը և այլ բնական վայր տեղափոխելը իրականացվում է լիազորված մարմնի համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների արտահանումը և ներմուծումը իրականացվում է լիազորված մարմնի համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

3.1 Համայնքի բնութագիրը

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք (կենտրոնը՝ Գայ գյուղ), համայնքում ընդգրկված բնակավայրերի թիվը՝ 13, անվանումները՝ Ջրառատ գյուղ, Ակնաշեն գյուղ, Ապագա գյուղ, Առատաշեն գյուղ, Արաքս (Էջմիածնի շրջ.) գյուղ, Արտիմետ գյուղ, Գայ գյուղ, Գրիբոյեդով գյուղ, Լուսագյուղ գյուղ, Խորոնք գյուղ, Հայկաշեն գյուղ, Մեծամոր գյուղ, Ջրարբի գյուղ):

Համայնքի բնակչության թվաքանակը՝ 28892 մարդ (տվյալները վերցված են ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքից), համայնքի կենտրոնի հեռավորությունը մայրաքաղաքից՝ 22.2 կմ, համայնքի վարչական տարածքը՝ 9809.9 հա, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 840 մ, ազգային կազմ՝ հայեր, ռուսներ, եզդիներ, հեռախոսային կոդ՝ (374) 231, համացանցային պաշտոնական կայքի հասցեն՝ www.araqshamaynq.am:

3.1.1 Աշխարհագրական նկարագիրը

Համայնքի հեռավորությունը ՀՀ պետական սահմանից ըստ բնակավայրերի՝ գ. Արաքս 0կմ, գ. Արտիմետ 25կմ, գ. Ակնաշեն 5կմ, գ. Առատաշեն 18կմ, գ. Ապագա 5կմ, գ. Խորոնք 18կմ, գ. Գրիբոյեդով 20կմ, գ. Գայ 3,5կմ, գ. Հայկաշեն 1կմ, գ. Լուսագյուղ 7կմ, գ. Մեծամոր 20կմ, գ. Ջրառատ 1,5կմ, գ. Ջրարբի 5կմ:

Բնակելի առանձնատների քանակը կազմում է՝ գ. Խորոնք 506, գ. Գրիբոյեդով 387, գ. Առատաշեն 224, գ. Ակնաշեն 327, գ. Ջրարբի 215, գ. Լուսագյուղ 180, գ. Արտիմետ 398, գ. Ապագա 388, գ. Հայկաշեն 228, գ. Արաքս 344, գ. Գայ 806, գ. Մեծամոր 308, գ. Ջրառատ 799 միավոր, իսկ բազմաբնակարան շենքերի քանակը՝ 0 միավոր:

3.1.2. Պատմական ակնարկ

ՀՀ Արմավիր մարզի Արաքս համայնքը գտնվում է Մարզի հյուսիս-արևելյան հատվածում, զբաղեցնում է 9809.9 հա տարածք: Համայնքի կազմում ընդգրկված է 13 գյուղական բնակավայրեր: Համայնքի ընդհանուր բնակչության թվաքանակը կազմում է 28892 մարդ:

Ապագա գյուղը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի կազմում:

Գյուղը նախկինում ունեցել է Թուրքմենլու, Վերին Թուրքմենլու անվանումները, 1935 թվականից անվանվել է Ապագա:

Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Մոտկանի գավառի Նիչ, Մցու, Կնձու, Բուզնոտ, Մրցան, Քաշախ, Հիզան, Տնգետի, Խուրթի՝ Գելոնք, Մուշի Բլանուխ գյուղերից Ալաշկերտից Մեծ Եղեռնից փրկված հայերն իրենց ապաստանը գտան Արաքս գետի ձախափից ոչ շատ հեռում բնակավայրում, որը մոտ էր սահմանին և հայրենիք վերդառնալուց շուտ կհասնեին տուն: Նրանք հիմնեցին նոր բնակատեղի, որը 1935 թվականին անվանեցին Ապագա՝ որպես նոր կյանքի սկիզբ և շարունակություն:

Գյուղը հիմնադրվել է 1919 թվականին: Գյուղը սահմանակից է Ջրառատ, Ջրարբի, Լուսագյուղ, Գրիբոյեդով, Առատաշեն, Արտաշար և Երասխահուն գյուղերին:

Լուսագյուղ գյուղը՝ գտնվում է Արարատյան դաշտավայրում, ծովի մակերևույթից 830 մ բարձրության վրա: Գյուղը հիմնվել է Սուրմալու գավառի Արաքս գետի աջ ափին մոտ գտնվող Դաշբուռն գյուղի գաղթականներով: Համայնքի հին անվանումները եղել են՝ Թուրքմենլու, Թուրքմենլու, Ներքին Լուսագեղ, հետագայում՝ 1935 թվականին գյուղը վերանվանվել է Լուսագյուղ, որը տևական է մինչ օրս: Գյուղի կենտրոնում գտնվում են մանկապարտեզի և

դպրոցի շենքերը: Կլիմայական պայմանները խիստ են:

Մեծամոր գյուղը հիմնադրվել է 1922 թվականին: Մեծամոր գյուղի հեռավորությունը մարզկենտրոնից 40 կմ է: Նախկինում ունեցել է Հեզլու Ղամարլու, Ղամարլու անվանումները: Մեծամոր է վերանվանվել 1946թ-ին: Գյուղը տեղադրված է Միջին արաքսյան հարթավայրում, Մեծամոր գետի ձախ ափին՝ ծովի մակարդակից 830մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5°C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է +24-ից +26 °C, իսկ առավելագույնը՝ +42 °C: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Գրիբոյեդով գյուղը գտնվում է Վաղարշապատի տարածաշրջանում, սահմանակից է արևելքից՝ Վաղարշապատ համայնքին, հյուսիսից՝ Արտիմետ, արևմուտքից՝ Խորոնք, հարավ-արևմուտքից՝ Ապագա և հարավ-արևելքից՝ Ակնաշեն համայնքներին: Գրիբոյեդով համայնքը գտնվում է մայրաքաղաքից և մարզկենտրոնից հավասար հեռավորության վրա՝ 30 կմ: Նախկինում ունեցել է Արալիս, Արալիս Բաշքյանդ, Արալիս Քյուլանլու, Արալիս, Քյուլանի Արալիս, Վերին Քյուլանլու անվանումները: Գրիբոյեդով է վերանվանվել 1978թ-ին: Գյուղը նախկինում եղել է թուրքաբնակ: 1917թ.-ից սկսած գյուղում սկսել են բնակվել հայեր՝ գաղթած Ղարաբաղից: 1949-1950թթ-ին բնակվել են նաև հայրենադարձված պարսկահայերը: 1949թ. Արծվաշենից 30 ընտանիք են վերաբնակվել: 1950-ական թվականներին եկել են եզդիները:

Ակնաշեն գյուղի նախկին անվանումը՝ Վերին Խաթունարիս է: Բնակավայրի հեռավորությունը քաղաքից մոտ 6 կմ հարավ: Տեղակայված է մարզկենտրոն Արմավիրից 34 կմ հարավ-արևելք, ծովի մակարդակից 835մ բարձրության վրա: Բնակիչները հայեր են, որոնց նախնիները 1828-1829 թվականներին գաղթել են Խոյից, որոշ թվով բնակիչներ այստեղ են գաղթել նաև Սուրմալուից՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և անասնապահությամբ:

Առաքաշեն գյուղի նախկին անվանումը՝ Մեծ Զեյվա, գյուղ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանում, Վաղարշապատ քաղաքից մոտ 5 կմ հարավ-արևելք, Քասաղ գետի աջ ափին: Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 845մ: Վերանվանվել է Առաքաշեն 1978թ. հունվարի 25-ին: Բնակիչները հայեր են, որոնց նախնիները 1828-1829 թթ. Գաղթել են Սալմաստից, Խոյից և 1915-1916 թվականներին Ալաշկերտից:

Արտիմետ գյուղի անվանումը մինչև 1946թ. եղել է Ալիբեկլու, 1946-1991թթ.՝ Աթարբեկյան: Բնակավայրը տեղակայված է Վաղարշապատ քաղաքից մոտ 1 կմ հարավ-արևմուտք: Գյուղը վերանվանվել է Աթարբեկյան 1946թ. ապրիլի 4-ին, Արտիմետ՝ 1991թ. օգոստոսի 8-ին: Գյուղը նախկինում Ալիբեգլի անվան տակ մտել է Երևանի նահանգի Էջմիածնի գավառի կազմում: Բնակիչները հայեր են, որոնց նախնիները գաղթել են Իգդիրից, Վանից 1915-20թթ., Իրանից 1946 թ., Սիսիանից, Աշտարակից, Ապարանից և Սպիտակից: Հեռավորությունը Երևանից

28կմ, մարզկենտրոնից՝ 31կմ, ՀՀ պետական սահմանից 10կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից 850-860մ, բնակլիմայական պայմանները՝ չոր ցամաքային:

Արաքս գյուղի նախկին անվանումը՝ Ներքին Ղարխուն: Գյուղը տեղակայված է Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքից մոտ 9կմ հարավ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 905մ բարձրության վրա: Արաքս է վերանվանվել 1946 թվականի հուլիսի 15-ին: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը եղել է ադրբեջանաբնակ, այնուհետ ունեցել խառը հայ-ադրբեջանական բնակչություն: Ներկայիս բնակիչները հայերեն, որոնց նախնիների մի մասը 1915-1920 թվականներին եկել է Սուրմալուի գավառից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:

Գայ գյուղը նախկինում անվանվել է Խաթունարխ: Բնակավայրի հեռավորությունը Վաղարշապատից՝ 6կմ, մարզկենտրոնից՝ 36կմ, ՀՀ պետական սահմանից՝ 9կմ: Գայ է վերանվանվել 1978թ-ին: Նախկինում ունեցել է Խաթունարխ անվանումը: Հիմնադրվել է 1670-1680 թվականներին և կոչվել է Խաթունարխ՝ Երևանի Սեֆիխանի կնոջ՝ Խաթունի անունով, որն ամուսնու հետ այստեղ կառուցել է իր անունով ջրանցք, իսկ այդ տեղ գտնվող 2 գյուղերը կոչվել են Վերին և Ներքին Խաթունարխ: (Վերին Խաթունարխը ներկայիս Ակնաշեն գյուղն է): Գյուղը տեղադրված է միջին արաքսյան հարթավայրում՝ ծովի մակարդակից 843մ բարձրության վրա: Կլիման չոր է, խիստ ցամաքային է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Հարուստ է արտեզյան ջրերով, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր: Գյուղի բնակչության նախնիների մի մասը 1828-1829թթ. տեղափոխվել է Պարսկահայաստանից՝ Խոյ և Սալմաստ գավառներից:

Հայկաշեն գյուղի նախկին անվանումը՝ Ղարղաբազար է: Հեռավորությունը Վաղարշապատից՝ 8կմ, մարզկենտրոնից՝ 40կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Կարաշիրին, Կարգաբազար, Ղարլապազար, Ղարղաբազար անվանումները: Հայկաշեն է վերանվանվել 1967թ-ին: Գյուղը տեղակայված է Միջին արաքսյան հարթավայրում՝ ծովի մակարդակից 830մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է +24 °C-ից +26 °C, իսկ առավելագույնը՝ +42 °C: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վերածվել են կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Ըստ Ղևոնդ Ալիշանի այս գյուղի մոտ է գտնվել Աղզիվար Կալեսի բերդը:

Ջրառար գյուղի նախկին անվանումը՝ Վերին Ղարխուն է: Բնակավայրը տեղակայված է Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքից 8-9կմ հարավ՝ Մեծամոր գետի աջափնյակում: Հեռավորությունը մարզկենտրոն Արմավիրից կազմում է 37կմ, բարձրությունը ծովի մակարդակից՝ 835մ: Բնակավայրը սահմանակից է Արաքս, Լուսազյուղ, Մեծամոր, Ջրարբի, Ապագա, Երասխահուն գյուղերին: Բնակչությունը կազմված է հայերից և եզդիներից: Գյուղը

գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում, որն ունի կիսաանապատային և անապատային կլիմա, որտեղ տարեկան տեղումների քանակը կազմում է 300-350մմ: Ջրառատ գյուղն ծովի մակերևույթից բարձր է 650-700մետր: Կլիման ամռանը նկատվել է ստվերում $+25^{\circ}\text{C}$ - $+30^{\circ}\text{C}$, իսկ ձմռանը միջին ջերմաստիճանը տատանվում է -8°C -ից -10°C աստիճան: Գյուղի բնակչության նախնիները 1915-1920թթ. ներգաղթել են Երևանի նահանգի Սուրմալուի գավառից:

Խորոնք գյուղը մինչև 1946 թվականը անվանվել է Ներքին Այլանլու, 1946-1991 թվականներին՝ Լենուղի: Բնակավայրը տեղակայված է Վաղարշապատ քաղաքից մոտ 3կմ հարավ-արևմուտք: Վերանվանվել է Լենուղի 1946թ. ապրիլի 4-ին, Խորոնք՝ 1991թ. օգոստոսի 8-ին: Գյուղը տեղադրված է Միջին արաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից ունի 830մ բարձրություն: Կլիման չոր խիստ ցամաքային է: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Բնակիչները հայեր են, որոնց մի մասի նախնիներն այստեղ են գաղթել Վանի, Բայազետի, Արճեշի շրջաններից և Արծափից 1829-1830 թվականներին:

Ջրաբքի գյուղը գտնվում է Արարատյան դաշտավայրում՝ ծովի մակերևույթից 870մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1974 թվականին, Ջրառատի թոշնաֆաբրիկայի (ներկայիս Արաքս թ/ֆ) հենքի վրա: Գյուղի հիմնադրման տարեթիվը համընկնում է խորհրդային միությունում իր հզորության ծավալներով երկրորդը համարվող Ջրառատի թոշնաֆաբրիկայի ստեղծման տարեթվին: Գյուղըն այդ տարիներին որպես բանվորական ավան աշխատողներին տեղավորելու նպատակով ֆաբրիկայի հետ միաժամանակ գոյացավ: Սկզբնական շրջանում գյուղը միացյալ էր Ջրառատի հետ և կոչվում էր Բանվան: 1991-1992 թվականներին այն առանձնացավ Ջրառատից, իր վարչական տարածքն ունեցավ և անվանվեց Ջրառատի թ/ֆ: Իսկ արդեն 2005 թվականի ՀՀ կառավարության որոշմամբ անվանափոխվեց Ջրաբքի: Կլիման ձմռանը լինում է ցուրտ, ամռանը՝ շոգ:

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավորնվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ապագա, Էջմիածնի խճուղի 47 հողամաս հասցեում՝ Արթուր Դավիթի Հարությունյանին պատկանող տարածքում:

Ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման նախնական հայտը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

4.1. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

4.1.1. Հողատարածքի ներկա վիճակի նկարագիր

Ավտոգազալցավորման ճնշակայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա բնակավայրի Էջմիածնի խճուղի թիվ 47 հողամաս հասցեում՝ Արթուր Դավիթի Հարությունյանին պատկանող տարածքում:

Հողատարածքը հարակից է Թուրքիայի սահմանին՝ Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհից 23,5մ հեռավորության վրա:

Էլ. գծերը, գազատարը և ջրագիծը գտնվում են 30–180մ հեռավորության վրա: Մեքենաների մուտքն ու ելքը օրական չի գերազանցելու թվով 165 մեքենա:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Կառույցի հեռավորությունը հարակից շենք-շինություններից նախատեսվել է գործող

նորմատիվային պահանջներին համաձայն:

Հողամասի մակերեսը կազմում է 0.2586հա, որի ճակատային մասը՝ 50մ, լայնությունը 42մ:

Համաձայն կառուցապատման գլխավոր հատակագծի, ԱԳԼՃԿ-ն կառուցվելու է ավտոճանապարհից 23,5մ հետ: Մուտքն ու ելքը կազմակերպվում է դաշտամիջյան ճանապարհով:

Տարածքով չեն անցնում ինժեներական և կոմունիկացիոն գծեր և այն գտնվում է վերջիններիս անվտանգության և սպասարկման գոտիներից դուրս:

Հողամասն ազատ է կառուցապատումից, բուսականությունը բացակայում է:

Տարածքում կառուցապատում իրականացնելու համար հիմք է հանդիսանում տարածքի սեփականատեր Արթուր Դավիթի Հարությունյանի սեփականության իրավունքը հաստատող թիվ 21072022-04-0076 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը տրված 21.07.2022թ. և 24.02.2023թ. տրամադրված թիվ 15 նախագծման թույլտվությունը:

- հողատարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

4.1.2. Նախադրեավոր գործունեության նկարագիր

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա բնակավայրի էջմիածնի խճուղի թիվ 47 հողամաս հասցեում Արթուր Դավիթի Հարությունյանին պատկանող, 04-012-0202-0027 կադաստրային ծածկագրով հողամասում նախատեսվում է իրականացնել ավտոգազալիցքավորման ճնշակայանի (ԱԳԼՃԿ) կառուցման աշխատանքները:

Ավտոմեքենաների գազալցման ճնշակայանը մեկուսացված է բնակելի զանգվածից շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների բնական գազի լիցքավորման ճնշակայանը բաղկացած է՝

- ճնշակայան՝ 2 հատ ճնշակով, մոդել 2 ГМ4-12/250,
- ստորգետնյա պահեստարան՝ բարձր ճնշման գազի կուտակիչներ բալոնայի տիպի, թվով 15 հատ,
- լցասունյակներ՝ թվով 2 հատ, 2 ճնշափողով,
- օպերատորական սպասասրահ:

Նախատեսվող սարքավորումները պետք է լինեն գործարանային հավաք վիճակի արտադրության և տեղադրվեն համաձայն սարքվածքների հետ ստացվող մեթոդական ցուցումների և տեխնիկական անձնագրերի:

ԱԳԼՃԿ-ի նախագիծը մշակված է ՇՆուԿ 2.07.01-89 «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» և ՇՆՁ IV-12.101.04, «Գազաքաշխիչ համակարգեր» նորմերի, ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 28-ի «Ավտոգազալիցքավորման ճնշակայանների /ԱԳԼՃԿ/ կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 101 որոշման համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 2022թ. հուլիսի 21-ի «Ավտոգազալցակայանի կառուցման և շահագործման տեխնիկական անվտանգության կանոնակարգը սահմանելու մասին» թիվ 1131 որոշման:

Կառույցների ճարտարապետա-շինարարական տվյալները հետևյալն են՝

- հիմքեր՝ ժապավենային ե/բ հիմնային հեծանների տեսքով,
- պատեր՝ 40 սմ հաստությամբ, Արթիկի կանոնավոր կտրվածքով տուֆաքարից, ե/բ միջուկներով,
- ծածկերը՝ մետաղական,
- տանիքները՝ միալանջ, ծածկված ցինկապատ ալիքավոր թիթեղով:

Կենցաղային ջրամատակարարումն իրականացվում է տարածքում գործող ոռոգման նպատակով օգտագործվող գրունտային ստորերկրյա ջրերի հորատանցքից: Խմելու ջուրը մատակարարվում է շշալցված: Էլեկտրամատակարարման տատանումները կանխելու նպատակով նախատեսվում է տեղադրել պայթյունաանվտանգ տրանսֆորմատորային ենթակայան:

Ճնշակայանը /կոմպրեսորային կայանը/ իրենից ներկայացնում է բետոնե պատերով շինություն:

Օդափոխության իրականացման համար նախատեսվում է տեղադրել 2 հատ 500 տիպի դեֆլեկտոր օդի արտածման համար: Ճնշակայանում նախատեսվում է նաև տասնապատիկ վթարային օդափոխության համակարգ պայթյունաանվտանգ առանցքային վենտիլատորներով:


Գազի հաշվառման հանգույցից մինչև կոմպրեսորային կայան գնացող խողովակագծերը նախատեսված են ԵՏ. 20 տիպի:

Կոմպրեսորային կայանից դեպի գազի բալոնային կուտակիչներ և կուտակիչներից դեպի լցասունյակներ 32x4 տրամագծով / 12x18 և 10τ/ մակնիշի երկու խողովակագծով:

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ՝

- հզորություն – 500 մեքենա/օր
- ընդհանուր տարածք – 0.2586 հա
- օպերատորական - 62,0 քմ
- ծածկարան – 96,0 քմ
- կոմպրեսորային կայան – 98,56 քմ
- կուտակիչների պահեստարան – 27,09 քմ
- նախատեսվող կառուցապատման մակերեսը – 283,65 քմ
- կանաչապատ տարածք – 178,0 քմ

ՏԵՂԱՆՔԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ





Ավազի լճացման տեղամաս,
տարածքում գտնվում է քարե շինություններ




Էլեկտրական սյուճնեղը և մարդկանեղը
գտնվում են թայլատրեղի սիմանից հեռու


Երկրորդական ճանապարհ

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ


ՃԱԿԱՏ - Ա




ՃԱԿԱՏ - Գ




ՃԱԿԱՏ - Բ




ՃԱԿԱՍ - Դ



ՃԱԿԱՍ ԱՌԱՋՔ Դ-Ա



ՃԱԿԱՍ ԱՌԱՋՔ Ա-Դ




ԿՈՄՊՐԵՍՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՃԱԿԱՍ

ՇԱՐՀԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՌԱՋԱՅԱՑԻՆ ԶԱՅԵՐԸ ՑՈՂԱՑ ԵՎ ՄԱՐԽԱՆՑԻՐԻՄ
2. ՄԱՍՆԱԿԱՆԻՆ ԿՐԻՐԸ ՑՈՂԱՑ ԵՎ ՄԱՐԽԱՆՑԻՐԻՄ

ԳԵՐԱՆՆԱԳԻՐ 25 - 2025			25. ԱՌԱՋԱՅԱՑԻՆ ԶԱՅԵՐԸ ԶՈՂԱՑ ԵՎ ՄԱՐԽԱՆՑԻՐԻՄ		
ՏՐԱՆՍՊՈՐՏԻՆ	ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.	ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.	ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.	ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.	ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.
			ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.	ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.	ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.
			ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.	ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.	ՇԻՐԱՐԱՆՆԱԳՐԻ Ա.

ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՎԱՀԱՆԱԿՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

N	Անվանում	Քանակ (հատ)	Ծանոթություն
1	Կրակմարիչ	2	
2	Դույլ	2	
3	Բաժեր (սվին և թիակավոր)	2	
4	ավազով արկղ	1	
5	Հրշեջ լում	1	
6	Հրշեջ կեռաձող	1	
7	Հրշեջ կացին	2	
8	Ջրի տարողություն	2	յուր. 100լ

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Նախատեսվող ԱԳԼՃԿ

Մ3 ճանապարհ



Ավազի լճացման տեղամասի
հեռավորությունը
կուտակիչների տեղամասից 73մ

Քարե շինության հեռավորությունը՝ կոմպրեսորային կայանից 130մ
կուտակիչների տեղամասից 140մ



	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ	ԸՆԴԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ												
		1	2	3	4	5	6	7						
		ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ												
1.	ՀԻՄՆԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՆԵՐ													
2.	ՀԱՅՏԵՐԻ ԱՌԱԿԱՆԱՅՄԱՆ ԵՆԼՔԱՆԱՅՄԱՆ													
3.	ԱՌԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԱՅԻՆ													
4.	ՀԱՅՏԵՐԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
5.	ԱՌԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
6.	ԱՌԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
7.	ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ ԱՌԱԿԱՆԱՅՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ													
8.	ՇԱՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
9.	ՇԱՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
10.	ԴԱՏԱՆԱՅՄԱՆ													
		ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ												
11.	ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
12.	ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
13.	ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
14.	ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
15.	ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
16.	ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ													
17.														
18.														
19.														
20.														
21.														
22.														
23.														
24.														
25.														

4.1.3. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կանաչապատել և բարեկարգել տարածքը: Կանաչապատվող տարածքի մակերեսը կազմում է ընդհանուր տարածքի 6,9 %՝ 178 մ²:

Տարածքը նախատեսվում է կանաչապատել՝ սիզամարգերով, ծառերով և թփերով:

Ոռոգման նպատակաով ջրամատակարարումը կիրականացվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստերնով, մասնագիտացված ընկերության կողմից:

Կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ 300մ³ հողաբուսաշերտի ձեռքբերում, որը կհամաձայնցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3 / \text{մ}^2$

ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$,

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 178 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է,

$K = 2$ t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է,

t = 175 օր

$W_{u.3} = (0.006 \times 178) \times 2 \times 175 = 373.8 \text{ մ}^3 / \text{տարի}$

4.1.4. Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինարարական

Ավտոգազալցաճնշակայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ապագա, Էջմիածնի խճուղի 47 հողամաս հասցեում՝ Արթուր Դավիթի Հարությունյանին պատկանող տարածքում:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում են հողային աշխատանքներ՝ հանույթ շուրջ 60 մ³, որից ետլիցք՝ 10 մ³:

Ավելացած հողային զանգվածը կօգտագործվի տարածքի հարթեցման, բարեկարգման համար:

Շինարարական աշխատանքներում մասնակցող աշխատողների ընդհանուր թիվը՝ 18 մարդ, որից

- բանվորներ՝ 15 մարդ
- ԻՏԱ՝ 3 մարդ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

- էքսկավատոր՝ 1 հատ
- բեռնատար՝ 1 հատ
- բետոնխառնիչ մեքենա՝ 1 հատ
- ինքնաթափ՝ 1 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Ապրանքային բետոնը շինհրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շինհրապարակում:

4.1.5. Նյութերի և քնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է՝ շուրջ 9մ³:

Շինարարական աղբն ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

- շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ՝}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³ օր/մարդ

սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 15 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³ օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 150 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 15 \times 0.025) \times 150 = 63.45 \text{ մ}^3/\text{շին. ժամ}$$

- ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U1 = S1 \times K1 \times T, \text{ որտեղ՝}$$

$S1$ – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

$K1$ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 150

$$U1 = 500 \times 0.0015 \times 150 = 112.5 \text{ մ}^3/\text{շին. ժամ.}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 175.95 մ³/ժամ

- հակահրդեհային ցանցի հաշվարկային պահանջվող ջրի քանակության համար, նախատեսված են թվով 2 հատ հրշեջ հիդրանտներ, որոնք սնվում են կենցաղային ջրամատակարարման համար նախատեսված, տարածքում գործող ոռոգման նպատակով օգտագործվող գրունտային ստորերկրյա ջրերի հորատանցքից՝ շուրջ 11-12 լ/վրկ. ծավալով:

- ջրամատակարարումն իրականացվելու է գործող ոռոգման համար օգտագործվող գրունտային ստորերկրյա ջրերի հորից՝ պոմպակայանի միջոցով:

Բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շին.հրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, սանհանգույցներ (ցնցուղներ) և վագոն-տնակների տեսքով աշխատանքային սենյակներ ու հանդերձարան, որոնք շինարարական աշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շին.հրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելու են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի պահանջների:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրամատակարարումը կատարվելու է հատուկ նախատեսված ավտոմեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

4.1.6. Գազամատակարարում

Համաձայն «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ 13.09.2022թ. թիվ 02/17.1/2742-2022 տեխնիկական պայմանի, ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ապագա, Էջմիածնի խճուղի 47՝ Արթուր Դավիթի Հարությունյանին պատկանող, 04-012-0202-0027 կադաստրային ծածկագրով հողամասում նախատեսվող ավտոգազալիցքավորման ճնշակայանի (ԱԳԼՃԿ) գազամատակարարումը, $P=0,6 \div 0,8$ ՄՊա ճնշման և $Q=500$ մ³/ժամ ծախսով կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանների:

գործող գազատարում գազի ճնշումը	P աշխ. Փաստ = $1,4 \div 1,7$ ՄՊա
գազատարի տրամագիծը Ø (մմ)	325 x 7,2 մմ
միացման տեղը	ըստ նախագծի – ԳԲԿ Էջմիածին սնող Dպ=300 կողմնատար – գազատարի 0,36 կմ-ից
գազատարի որևէ հատվածի վերականգնման անհրաժեշտություն	չկա
օբյեկտի հեռավորությունը գազատարից	ըստ նախագծի - լուծումների գործող նորմատիվների պահանջների
տեղադրվող գազի հաշվիչ	ըստ գազասպառման ծախսերի - բարձր ճշտության դասի կահավորված էլեկտրոնային ճշտիչով
լրացուցիչ պայմաններ	կառուցել՝ համապատասխան հզորության գազաբաշխիչկայան (ԳԲԿ), որի կազմում պետք է մտնեն՝ ա) փոխմիացման, գազի մաքրման, գազի ճնշման նվազեցման, գազի հաշվառման, գազի հոտավորման և սեփական կարիքների համար վերցնման հանգույցները բ) էլեկտրասնուցման, կապի կոռոզիայից պաշտպանման, պահպանման և հրդեհային, ծայնա-ազդանշանային, ջրամատակարարման ու կոյուղու համակարգերը
	կառուցել՝ ԳԲԿ-ն սնող կողմնատար-գազատար

	(P=4.0 ՄՊա), փականային հանգույցներում օգտագործելով ստորգետնյա գնդային փականներ
	կառուցել՝ էլեկտրաքիմիական պաշտպանության, պահպանության և հրդեհային ծայնա-ազդանշանային, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր
	նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակել ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21.04.2023թ. թիվ 584-Ն որոշմամբ ընդունված «Գազափոխադրման համակարգում անվտանգության և շահագործման կանոնները», ՀՀ կառավարության 13.04.2023թ. թիվ 539-Ն որոշմամբ ընդունված «Գազաբախշման համակարգերի անվտանգության և շահագործման կանոնները», Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 23.12.2020թ. թիվ 121 որոշմամբ ընդունված ԵԱՏՄ ՏԿ 49/2020 տեխնիկական կանոնակարգի, ՀՀ կառավարության 16.07.2015թ. թիվ 787-Ն որոշմամբ ընդունված կարգի պահանջներին համապատասխան և համաձայնեցնել շահագրգիռ կազմակերպությունների հետ:

4.2. Գազալցակայանի տեխնիկական բնութագրերը

Ըստ տեխնիկական պայմանների, ավտոմեքենաների գազալցման մոդուլային կայանները նախատեսված են 9 բալ (ներառյալ) սեյսմակայունության, -60° C արտաքին նվազագույն ջերմաստիճանի, 1960Պա ձյան բեռի և 441Պա քամու դինամիկ ճնշման հաշվարկով:

Գազալցվող ավտոմոբիլների համար սեղմված վառելիքային գազը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 27577-87 պայմաններին:

ԱԳՆԿՍ դուրս եկող գազի հաշվարկային կազմը տոկոսային հարաբերությամբ.

մեթան	-95,01
էթան	-1,42
պրոպան	-0,51
իզոբութան	-0,05
իզոպենտան	-0,02
թթվածին	-0,06

ազոտ	-2,45
հեքսան	-0,01
ծծմբաջրածին	-0,0015գ/մ ³

Թույլատրված պարունակությունը և լիցքավորման պարամետրերն են՝

էթան – մինչև 20%

պրոպան – մինչև 5%

բութան – մինչև 2%

ազոտ – մինչև 10%

ածխաթթու գազ - մինչև 2%

գազի խտությունը՝ 0,65+0,85 կգ/մ³

նվազագույն ջերմատվությունը՝ 7920 կկալ/մ³

խոնավության և ծանր ածխաջրածինների ցողի կետերի ջերմաստիճանը և մեխանիկական խառնուրդների պարունակությունը ԱԳԿԿ մուտքին՝ ըստ OCT 51.40-83:

ԱԳԿԿ մուտքին գազի ջերմաստիճանը՝ +30°-ից -5° C

ԱԳԿԿ մուտքին գազի ճնշումը՝ 0,4+0,6 ՄՊա /բացարձակ/

մեքենայի բալոններում գազի ամենաբարձր ճնշումը – 19,6 ՄՊա:

Մեկ մեքենայի լիցքավորման ժամանակը, ներառյալ օժանդակ գործողությունները, 10-12 րոպե է:

ԱԳԿԿ աշխատանքի ռեժիմը շուրջօրյա է՝ առանց վերանորոգման համար աշխատանքների լրիվ դադարեցման: Լրիվ զբաղվածության դեպքում տարվա մեջ ԱԳԿԿ աշխատանքի հաշվարկային օրերի քանակը 360 աշխատանքային օր է: Աշխատող կոմպրեսորի ԱԳԿԿ առավելագույն պահանջվող հզորությունը 225 կվտ է: Նախագծի տեխնիկական որոշումները համապատասխանում են 1986թ. հրատարակված «ԱԳԿԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման կանոններ» ստանդարտի տեխնիկական պահանջներին:

Համաձայն 1986թ. հրատարակված «ԱԳԿԿ տեխնիկական սպասարկման և անվտանգ շահագործման կանոններ» ստանդարտի տեխնիկական պահանջներին խողովակների վթարային քանակ չի պահանջվում:

Սարքավորումների և խողովակաշարերի վիբրացիայի (տատանումների) մակարդակը համապատասխանում է ՌՏՍՄ 26-12-11-75 «Գլանային օպոզիտային կոմպրեսորներ: Գազի ճնշման տատանման և հաղորդակցման տատանման հաշվարկի մեթոդակարգ»-ին և ԳՈՍՏ 12.2.016-76.ՍՍԲՏ «Կոմպրեսորային սարքավորումներ: Անվտանգության ընդհանուր պահանջներ»-ին: Տարողությունների կառուցվածքը թույլ է տալիս իրականացնել լիցքավորման փողոկների ինչպես աջ, այնպես էլ ձախ տեղադրվածություն ունեցող մեքենաների լիցքավորումը: Այդ պատճառով էլ ԱԳԿԿ տարածքում ավտոմոբիլների հանդիպակաց երթևեկություն չպետք է լինի:

4.3. Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը

Բնական գազը հիմնական գազատարից անցնելով ճնշման կարգավորիչով մտնում է կոմպրեսորային բաժին: Կոմպրեսորային բաժնում գազը մաքրվում է մեխանիկական խառնուրդներից և խոնավությունից և մտնում կոմպրեսորներ: Կայանում տեղադրվելու է

$V=1500$ մ³/ժամ, $P=250$ մթն տիպի երկու հատ ճնշակահին տեղակայումներ:

Կոմպրեսորների սառեցումը կատարվում է օդային եղանակով:

Կոմպրեսորներից հետո գազը մաքրվում է յուղից և խոնավությունից: Անջատված յուղը և ջրի կաթիլները հավաքվում են հատուկ տարողության մեջ:

Կոմպրեսորային բաժնից գազը տրվում է կուտակիչներ ($V=400$ և 15 հատ) որտեղից և լցասյունակներ: Կայանում օգտագործվում են հերմետիկ սարքավորումներ, հսկիչ չափիչ սարքեր, ավտոմատ կարգավորիչներ, որոնց շնորհիվ գազի սեղման, չորացման և մաքրման ընթացքում բացառվում են արտանետումները:

Ավտոմեքենաների գազալիցքավորումը կատարվում է ճկափողի օգնությամբ: Ճկափողերը միացված են կոմպրեսորների մուտքին և մնացորդային գազը ներքաշվում է կոմպրեսորների մուտքի գծի մեջ:

Ճնշակային տեղակայումները ապահովված են ավտոմատ կառավարման համակարգերով:

Ավտոմատ կառավարման համակարգը դադարեցնում է ճնշակի աշխատանքը, եթե՝

- դադարել է հովացման ջրի մատակարարումը
- իջել է յուղի ճնշումը
- շինությունում բարձր է գազի կոնցենտրացիան
- էլ. համակարգում առաջացել է անսարքություն
- սեղման աստիճաններից հետո գազի պարամետրերը չեն համապատասխանում տրված պահանջներին:

Կուտակիչներում գազի ճնշումը կարգավորվում և պահպանվում է ավտոմատ եղանակով:

4.4. Վնասակար նյութերի հաշվարկային արտանետումները շահագործման ընթացքում

Ըստ տեխնոլոգիական գործընթացի մթնոլորտ է արտանետվում բնական գազ, որի հիմնական բաղադրիչն է՝ մեթանը (95.01%), էթան, պրոպան, էթանոլ և աննշան քանակներով հոտավորող նյութ՝ էթիլմերկապտան:

4.5. Զրային պաշարների պահպանություն

Հակահրդեհային ցանցի ջրի համար, նախատեսված է գրունտային ստորերկրյա ջրերի հորի թվով երկու հիդրանտների օգտագործումը: Նախքան հիդրանտների տեղադրումը, դրանք կհամաձայնեցվեն Փրկարար ծառայության հետ՝ համապատասխան տեսակի գլխիկներ տեղադրելու նպատակով:

Տարածքում կոյուղու ցանցը բացակայում է: Կայանում կառաջանան միայն կենցաղային կեղտաջրեր, որի համար կնախատեսվի անջրթափանց հոր, որը մասնագիտացված կազմակերպության կողմից պարբերաբար կդատարկվի:

4.6. Կոմպրեսորների հովացում

Կոմպրեսորների հովացման համար օգտագործվում է օդային հովացման համակարգ:

ԱԳԼՃԿ-ում գործելու է **2ԴՄ4-12/250 մակնիշի կոմպրեսորային տեխնոլոգիական բլոկ:**

Ըստ արտադրողի և սարքավորման տեխնիկական անձնագրի՝ 2ԴՄ4 -12/250 մակնիշի կոմպրեսորային տեխնոլոգիական բլոկը իրենից ներկայացնում է ստացիոնար գազային չորս աստիճանային մխոցներով սեղման կոմպրեսորային տեղակայում, հորիզոնական հենարանային բազայի վրա:

Ունի $3.5 \times 2.2 \times 2,6$ մ գաբարիտային չափերը:

Կոմպրեսորի գազի հովացումը կատարվում է օդային հովացումային սարքավորման միջոցով:

Կոմպրեսորի սեղմված գազի արտադրողականությունը կազմում է (52000 - 78000 մ³/ժ):

Կոմպրեսորի կառուցվածքն իր մեջ ներառում է ջրի և յուղի սառեցման, գազի նախնական պատրաստման, մշակման, փչահարման համակարգեր գտիչներով:

Ղեկավարումը և հսկումը կատարվում է էլեկտրոնային ավտոմատ չափիչ, հսկիչ ղեկավարման սարքերով:

Կոմպրեսորի շարժիչը համատեղ գերմանա-իտալական արտադրության է:

Գազի առավելագույն ճնշումը կազմում է միջև 27.0 ՄՊա, (270 կգ /սմ²) գազի 0,15-0,3 ՄՊա, (1,5-3,0) կգ /սմ² սկզբնական ճնշման դեպքում:

Կոմպրեսորի շարժիչը ասինխրոն տիպի, է ունի երկու արագություն:



Շարժիչը հանդիսանում է պայթուցանանվտանգ, եռաֆազ - 150 կվտ հզորությամբ 380 Վոլտ լարմամբ և 50 Հց հաճախականությամբ:

Պտույտների հաճախականությունը 750 պտույտ/ր:

Կոմպրեսորի շարժիչը տեղադրված է կոմպրեսորատեխնոլոգիական բլոկի շրջանակի վրա:

Կոմպրեսորի մեխանիզմի յուղման համար կարող են կիրառվել И-40А, Н-50А,/ ГОСТ 20799-75/ МГ-20 մակնիշի յուղերը:

Կոմպրեսորատեխնոլոգիական բլոկի զանգվածը կազմում է 5800 կգ:



Տնտեսական և կենցաղային կարիքների ջրօգտագործման ծավալները

Աշխատողների կենցաղային կարիքների և խմելու նպատակով ջրօգտագործումը՝

$$V2 = N1 K2 T3 + N2 K2 T4, \text{ որտեղ,}$$

N1 - հերթափոխի պետ – 2 հոգի,

K2 - համապատասխան ջրօգտագործման նորման – 0.016/մ³,

N2 - սպասարկող անձնակազմ – 6 հոգի

K3 - համապատասխան ջրօգտագործման նորման – 0.025 մ³,

T3 - հաշվարկվող աշխատանքային օրերի քանակը – 360օր

T4 - հաշվարկվող աշխատանքային օրերի քանակը – 360օր

$$V2 = 2 \times 0.016 \times 360 + 6 \times 0.025 \times 360 = 65.52 \text{ մ}^3/\text{տարի:}$$

Կորուստները կազմում են – 1.5 %, տարեկան – 0.98 մ³

Արտահոսքը կկազմի – 64.53 մ³/տարի:

Օրական ջրի ծախսը կկազմի 0.182 մ³

Ջրօգտագործման և ջրահեռացման հաշվեկշիռը՝

- ընդամենը ջրօգտագործում – 65.52 մ³/տարի,
- կորուստ – 0.98 մ³,
- ընդամենն արտահոսք – 64.53 մ³/տարի:

4.7. Ջրամատակարարում և ջրահեռացում

Կենցաղային նպատակով ջրամատակարարումն իրականացվում է տարածքում գործող ոռոգման նպատակով օգտագործվող գրունտային ստորերկրյա ջրերի թվով երկու հորատանցքերից: Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է: Ջրամատակարարման ներքին ջրմուղի ցանցի խողովակաշարի տրամագծերն ընտրված են D20մմ-25մմ՝ պոլիէթիլենային խողովակներից: Խողովակի տեղադրումը շինության հիմքի տակով նախատեսված է պողպատե խողովակից պատյանի միջով: Որպես հաշվարկային ելքեր ընդունված են ջրի ծախսի հետևյալ նորմերը՝

- առավելագույն ջրօգտագործման օրվա 1 աշխատողի համար՝ 9 լ/օր,
- առավելագույն ջրօգտագործման ժամին 1 աշխատողի համար՝ 2 լ/ժամ:

Խմելու ջրի հարցը կազմակերպվում է սառնարաններում շշալցված ջրերով և ջրի ապարատներով:

Կենցաղային կոյուղու համակարգը նախատեսված է սանիտարատեխնիկական սարքերից կենցաղային կեղտաջրերի հեռացման համար: Կոյուղու համակարգի խողովակները նախատեսված է իրականացնել ներքին ցանցի համար՝ D100 մմ և D50 մմ տրամագծի կոյուղու պոլիէթիլենային խողովակաշարով:

Կենցաղային կոյուղու ներքին ցանցի կանգնակի վրա նախատեսված է ստուգիչ-մաքրիչ սարքավորման տեղադրում: Կոյուղու կանգնակի արտաձգող մասի տրամագիծը ընդունված է Ø100մմ: Կենցաղային կոյուղին հեռացվում է բակ, որտեղից էլ միանում է մինչև V=1.6 մ³/օր ծավալով սեպտիկին, որը պարբերաբար դատարկվում և տեղափոխվում է ուտիլիզացման:

Կոյուղու համակարգը նախատեսվում է իրականացնել 0,8 մ սառեցման թաղման խորությամբ, ներանցումների հատումները պատերի հետ՝ պողպատե պատյանի միջոցով:

Ինչպես նշված է վերը՝ նախատեսված է տարածքում տեղադրել թվով 2 հատ հակահրդեհային հիդրանտներ, որոնք մատակարարվում են խորքային հորից պոմպի միջոցով:

Հակահրդեհային հիդրանտները տեղադրվում են ստորգետնյա եղանակով՝ օվալաձև ճանապարհային կափարիչով:

Խողովակների կցվող միացություններում հարկավոր է օգտագործել ռետինե սեղմող օղակներ, իսկ հիմքերում արված անցքերը, որոնցով անցնում են խողովակները հարկավոր է լցնել չայրվող էլաստիկ նյութով:

Ջրագծի և կոյուղու համակարգերի մոնտաժումը և փորձարկումը կատարվում է համապատասխան աշխատանքի արտադրության գործող նորմերի և կանոնների ՇՆՈՒԿ 3.05.01-85:

4.8. Թափոններ

Նախատեսվող գազալիցքավորման կայանում արտադրական թափոններ առաջանում են՝ մուտքային սեպարատորներում - գազը մաքրվում է մեխանիկական մասնիկներից և խոնավությունից, խոնավազտիչում - գազը մաքրվում է կաթիլային խոնավությունից, գտիչներում - գազը մաքրվում է յուղից:

Թափոնների քանակը կազմում է 220 կգ/տարի և կազմված են հետևյալ նյութերից՝

սիլիկագել	100 կգ,
յուղ	120 կգ,

Կոմպրեսորային բաժնում տեղադրված յուղորսիչներում կլանված յուղը հավաքվում է տարաների մեջ և պայմանագրային հիմունքներով կտրամադրվի նշված թափոնների վնասագերծմամբ զբաղվող լիցենզավորված կազմակերպության:

Թափոնները պատկանում են վտանգավորության III-րդ դասին:

Բաղկացած են մեխանիկական խառնուրդներից, ջրից, յուղից: Թափոնների ծածկագիրն է՝ 5410021102033:

Օգտագործված խոնավակլանիչը («Օդի և գազի չորացման ընթացքում օգտագործված սիլիկագել՝ ծածկագիր 3147050101995, վտանգավորության 3-րդ դաս») չի պարունակում որևէ տոկսիկ նյութ և սանձառայության թույլատրությունից հետո կարող է տեղափոխվել քաղաքային աղբանոց:

4.9. Էլեկտրամատակարարում

Էլեկտրամատակարարման նախագիծը կատարված է համաձայն գոյություն ունեցող նորմերի և կանոնների:

Նախագծով նախատեսված է ճնշակայանի էլեկտրասնուցում, օպերատորային մասնաշենքի լուսավորություն, լցայունակների լուսավորություն, արտաքին լուսավորություն, շանթապաշտպանություն և հողանցում:

4.10. Աղմուկ և թրթռում:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N 2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով:

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ, կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ ավելացում:

Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման փուլերի ընթացքում հիմնական աղմուկի աղբյուր է հանդիսանալու ավտոտրանսպորտային միջոցները:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի չգերազանցելու նպատակով իրականացվելու են համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

Շինարարական հրապարակը բնակելի տարածքներից գտնվում է զգալի հեռավորության վրա՝ գ. Հայկաշեն-1,0 կմ, և գ. Ջրառատ-1,5 կմ, դպրոցը-1,5 կմ, մանկապարտեզը-934 մ և բնակելի տուն-394 մ: Հաշվի առնելով այս փաստը, ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման փուլերում աղմուկի մակարդակը զգալի չէ և հարակից տարածքում չի գերազանցի սանիտարական նորմերը:

5. ՆԱԽԱՏԵՍԱՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1. Դիտարկվող տարածաշրջանի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Ավտոգազացանձակայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ապագա, Էջմիածնի խճուղի 47 հողամաս հասցեում՝ Արթուր Դավիթի Հարությունյանին պատկանող տարածքում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից դաշտավայրի այդ մասն իրենից ներկայացնում է նախալեռնա-թեքվածքային, թույլ ալիքաձև հարթավայր: Տարածաշրջանի ռելիեֆը հարթ է, ունի հավասարաչափ թեքվածություն:

Լանդշաֆտային տարբերությունների և շրջանների ձևավորման մեխանիզմների համեմատությունը ցույց է տալիս, որ լանդշաֆտի կառուցվածքում անտրոպոգեն և բնական բաղադրիչները գրավում են առաջնային կամ երկրորդական դիրք:

Լանդշաֆտային գոտին կիսաանապատային գոտին է, անապատային տեղամասերով: Տիպիկ անապատային լանդշաֆտներ Հայաստանի տարածքում չկան, սակայն դրանց նմանակները, առանձին հատվածներով հանդիպում են տվյալ տարածաշրջանում, հիմնականում գետային նստվածքների ու երրորդական կավերի վրա ծովի մակերևույթից մինչև 900մ բարձրության վրա և գրավում են փոքր տարածքներ:

Արարատյան հարթավայրին առավել բնորոշ են կիսաանապատային և աղուտամարգագետնային լանդշաֆտները: Վերջիններս մտնում են բուն կիսաանապատային գոտու մեջ:

Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այսպես կոչված չալաների հողեր: Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում նաև ցածրավայրային ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման:

Որոշ վայրերում հանդիպում են թաքիրանման հողեր և ավազի բլրակներ:

Հարավ - արևելքից եզրավորող նախալեռնային և ցածր լեռնային նստվածքային ջրամերձ ապարներ ունեցող տարածքներում՝ շնորհիվ չոր կլիմայի, առաջացել են անապատակիսաանապատային լանդշաֆտների հետաքրքիր տիպ՝ Բեդլենդներ, որոնք զերծ են բուսական ծածկույթից:

Կիսաանապատային լանդշաֆտը հատուկ է միջին Արաքսի հովտին: Կիսաանապատի ռելիեֆն ալիքավոր է, թույլ մասնատված, հարթավայրի եզրերում և մանավանդ արևմտյան

մասում՝ քարքարոտ:

Տարածաշրջանում հանդիպող յուրաքանչյուր լանդշաֆտային գոտի առանձնանում է իր ուրույն էկոհամակարգերով և դրանցում ներկայացված բուսական և կենդանական աշխարհով:

5.2. Տարածաշրջանի երկրաբանությունը և հիդրոերկրաբանությունը

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենային և պլեյստոցենային բազալտները, տուֆերը և տուֆաբրեկչիաները, որոնք տեղադրված են երրորդական հասակի նստվածքային հաստաշերտերի վրա և ծածկված են ավելի երիտասարդ ալյուվիալ-պրոլյուվիալ-դելյուվիալային նստվածքներով:

Ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հաստաշերտում առանձնանում են հիմնականում հետկյալ տարատեսակները՝ կավավազներ, ավազակավեր, ավազներ, կոպճամանրախճային նստվածքներ: Վերը նշված բոլոր տարատեսակները բնութագրվում են բարդ միահյուսվածքներով, շերտադարմամբ, կամ էլ աստիճանաբար անցումով մի ֆազիալ տարատեսակից՝ մյուսին: Նրանք չունեն տարածական տեղադրման հաստատունություն և շերտերի հերթականության օրինաչափություն:

Հանդիպում են փոշենման, խտացված և սպիտակահողերի տիպի կավավազներ: Դրանք քիչ թե շատ պարունակում են մանրախիճ, կոպիճ և տարահատիկ ավազ:

Սպիտակահողային կավավազները սուֆոզիոն անկայուն են: Խտության տեսակետից կավավազները փոփոխական են: Հանդիպում են պնդացած ենթաշերտեր, իսկ որոշ շերտեր գտնվում են փխրուն հոսուն վիճակում:

Ավազակավերի մեջ՝ կախված հատիկաչափական կազմից, առանձնանում են ծանր, միջին և թեթև տարատեսակները: Բոլոր տարատեսակները հաճախ պարունակում են մանրախճի և կոպիճի միացություններ:

Հաճախ հանդիպում են փոշենման ավազակավեր, որոնք անցնում են կավավազների, պարունակում են ավազների ենթաշերտեր և ոսպնյակներ:

Ծանր ավազների շարքում հանդիպում են թեթև մոխրանման ավազներ:

Որոշ ենթաշերտեր ներկայացված են մաքուր, լավ որակի ավազներով, իսկ որոշները վատ որակի են, ունեն փոշենման տարրերի խառնուրդներ կամ էլ մանրախճի և կոպիճի միացություններ, որոնց պարունակությունը տատանվում է մեծ սահմաններում:

Մանրախճա-կոպիճային նստվածքները խիստ տարբերվում են տարակազմությամբ: Խոշորահատիկ ֆրակցիան ներկայացված է տարբեր մեծության մանրախճով, մանր և միջին կոպիճով:

Հանդիպում է նաև խոշոր կոպիճ:

Բեկորները կազմված են բազալտներից, տուֆերից, հազվադեպ խարամներից: Նրանք հիմնականում լավ հղկված են և ունեն կլոր ձև: Մանրախճա-կոպճային գոյացությունները պատկանում են խոշորաբեկորային գրունտներին:

Տարածաշրջանում արմատական ապարներից տարածված են բազալտները և տուֆերը: Բազալտները բնութագրվում են ինտենսիվ ճաքճքվածությամբ և հողմնահարմամբ:

Տուֆերը և տուֆավազները քիչ խախտված են: Լավաների որոշ մասը մեծաբեկորային է:

Երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Տարածքի երկրաբանական կտրվածքն ուսումնասիրվել է ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա:

Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների հետևյալ տեսակները:

Շերտ 1՝ Լիցքեր կազմված խճից, խճաքարերից, բազալտներից:

Ժամանակակից տեխնածին առաջացումներ են:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի (24a) II կարգ է:

Շերտ-2՝ Խճաքարային գրունտ ավազակավային լցոնով, շագանակագույն, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, խճի և տեղ-տեղ մանրաբեկորների պարունակությամբ: Չորրորդական հասակի դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացում են:

Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի (13) IV կարգ է:

Շերտ 3՝ Բեկորային բազալտներ ամուր, բացից մինչև գորշ մոխրագույն, տեղ-տեղ վարդագույն, ճեղքավոր, ծակոտկեն, շատ հաճախ խոռոչավոր, շատ հազվադեպ խարամացված, տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ մոտ 40 ավազախճավազային լրացումով: Չորրորդական հասակի հրաբխային ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇՀՈՒՄ IV- 5-82-ի (6e) VI կարգ է:

Շերտ-4՝ Խարամացված բազալտներ կարմրավուն և մոխրագույն, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, բազալտների խճի և տեղ-տեղ մանրաբեկորների պարունակությամբ: Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇՀՈՒՄ IV-5-82-ի (6r) IV կարգ է:

Տարածաշրջանը հիդրոերկրաբանական տեսակետից գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում:

Ստորերկրյա ջրերը պատկանում են լճա-գետային գոյացություններին և ճաքճքված անդեզիտա-բազալտներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականանում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով:

Ճնշումային հորիզոնը տեղադրված է 150-200 մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք):

Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր: Նրանք պատկանում են ալյուվիալ-դելյուվիալ, պրոլյուվիալ նստվածքներին և սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից:

Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս- նոյեմբեր ամիսներին:

Տարածաշրջանի գլխավոր ջրային երակը հանդիսանում է Սելավ-Մաստարա գետը, որն ունի սեզոնային բնույթ և բացառապես սնվում է հալոցքային և անձրևային ջրերով: Գետը գործում է միայն ինտենսիվ ձնհալերի և վարար տեղումների ժամանակ: Այն սկիզբ է առնում Արագած լեռան հարավ-արևմտյան լանջից, դուրս է գալիս Արարատյան հարթավայր և թափվում է Սև-Ջուր գետը:

Սելավ-Մաստարա գետն են թափվում բազմաթիվ՝ Բազմաբերդի, Թալիշ-Շամիրամի և այլ վտակներ: Նրանք նույնպես ցուցաբերում են խիստ սեզոնային բնույթ:

5.3. Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Տարածաշրջանի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր մասերում հանդիպող տարաբնույթ հողաձևեր: Տարածաշրջանի ցածրադիր մասում տարածված են կիսաանապատային հողերը, որոնք տարածաշրջանում կազմում են աննշան տոկոս:

Նախալեռնային շրջաններում լայնորեն տարածված են խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը: Տարածաշրջանը ծածկված է ջրաբերուկային-մարգագետնային՝ հնում ոռոգվող հողերով, անտառային բուսականությունը՝ բնահողային ծածկույթին համապատասխան, նույնպես ենթարկված է ուղղահայաց գոտևորման:

Առավել ցածրադիր տեղերում, Արաքսի և նրա վտակների փուխ բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը:

Բնորոշ են բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում կուլտուրականացված են և ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Վերջին տասնամյակներին իրականացվել են աղուտային հողերի աղազրկման և կուլտուրականացման աշխատանքներ:

5.4. Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ

Հայցվող տարածքի սեյսմիկ պայմանների բնութագրումը կատարվել է ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» թիվ 102-Ն հրամանի:

Համաձայն դրա՝ տեղամասը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացումների մեծությունը (արտահայտված ազատ անկման g արագացման մասերով) կազմում է 0.3g:

Տարածքում արտածին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տենիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005թ.):

Սողանքային երևույթներ տեղամասի տարածքում չեն արձանագրվել, ինչը պայմանավորված է երկրաձևաբանական առանձնահատկություններով և տարածքի գրեթե հորիզոնական տեղադրմամբ (ընդհանուր մեղմաթեք անկում):

Մոտակա հայտնի սողանքային մարմինը քարտեզագրվել է տեղամասից բավականին հեռավորության վրա՝ ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Եդեսիա բնակավայրից մոտ 1.3 կմ հյուսիս- արևելք:

5.5. Կլիման և օդերևութաբանական պայմանները

Արմավիրի մարզը ծովի մակարդակից տատանվում է 800-1000մ բարձրությունների վրա, իսկ Արմավիր քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 870 մ բարձրության վրա:

Կլիման խիստ ցամաքային է: Մթնոլորտային տեղումների քանակը չի գերազանցում 300մմ: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս), հաճախ ջերմաստիճանը բարձրանում է մինչև 40-42°C: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ (հունվարին օդի միջին ջերմաստիճանը 10-20°C ցուրտ):

Միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 62%: Բնորոշ են միջին արագության՝ առավելագույնը՝ 3,5 մ/վրկ արագության արևմտյան և հարավ-արևմտյան քամիները: Ձյան ծածկույթի առավելագույն հաստությունը կազմում է 42 սմ:

Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները: Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Գործունեության տարածքի կլիմայական պայմաններն ներկայացված են ըստ Քաղաքաշինության կոմիտեի ՀՀՇՆ ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Համաձայն նշված փաստաթղթի՝ գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ուսումնասիրվող տարածքում կազմում է 0.7մ: Ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը 48 սմ: Ձյան նորմատիվային կշիռը՝ 70 կգ/մ² է:

5.6. Ջերմաստիճանը

Տարածաշրջանում օդի բացարձակ նվազագույնը աստիճանը -31 °C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է 41 °C, ամենատաք ամսվա միջին առավելագույնը՝ 25.2 °C: Ըստ ՀՀՇՆ ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերի, Արմավիրի տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները բերված են ստորև:

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից (մ)	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների (°C)												Միջին տարեկան (°C)
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Ապագա համայնք	837	-3,7	-1,2	5,1	12,2	17,1	21,2	25,2	25,1	20,1	13,0	6,1	-0,4	11,7

5.7. խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 62%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 62%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 29%:

Օդի հարաբերական խոնավության տվյալներ

Բնակավայրի օդերևութա-	Օդի հարաբերական խոնավությունը, %													
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	միջին	Միջին ամսական

բանական կայանի անվանումը													տա- րեկան %	Ժամը 15:00	
														ամենա ցուրտ ամսվա, %	ամենաջոգ ամսվա, %
Արմավիր	76	72	62	56	57	51	48	49	53	65	74	78	62	62	29

5.8. Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 274 մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 45 մմ, նվազագույնը օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ 10 մմ:

Ըստ ՀՀՀՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերի, Արմավիրի տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև:

Բնակավայրի, օդերևութա- բանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական, առավելագույն, մմ												Ձնածածկույթ		
	ըստ ամիսների											Տարեկան	առավե- լագույն տասն- օրյակա- յին բարձր- ությունը սմ	տարվա մեջ ձնա- ծածկույ- թով օրե- րի քա- նակը	ձյան մեջ ջրի առավե- լագույն քանակը մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Էջմիածին	18	20	26	37	45	26	15	10	10	25	24	18	274	48	44

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները:

Ընդհանուր առմամբ 2023 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33 216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Վաղարշապատ համայնքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ օգտվելով ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային

կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Ըստ այդ ուղեցույցի, մինչև 10-50 000 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- փոշի՝ 0.095 մգ/մ
- ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ
- ազոտի երկօքսիդ՝ 0.033 մգ/մ
- ածխածնի օքսիդ՝ 1.1 մգ/մ

5.9. Զրային ռեսուրսներ

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ է ջրային ռեսուրսներով: Արմավիր քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այդր (Ակնա) լիճը, որը զբաղեցնում է 50 հեկտար մակերես, ունի 2 մետր խորություն, ձագարածն ուրվագիծ և ստորերկրյա սնում: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում Մեծամորն է (Սևջուրը), որը սկիզբ է առնում Այդր լճից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով:

Գործում են Ստորին Հրազդանի, Էջմիածնի, Մեծամորի և այլ ջրանցքներ: Հիդրոէներգաբանական տեսակետից տարածաշրջանը գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերի սնուցումը իրականացվում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումային հորիզոնը տեղադրված է 150-200 մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք):

Շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր, որոնք սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ-մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին:

Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են:

5.10. Հողածածկ

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր:

Արաքսի և նրա վտակների փուխ բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալված տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների:

Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ալկալահողերը: Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճաք մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

ՀՀ Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա:

Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության (եփակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

5.11. Կենսաբազմազանություն

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Մարզում անտառածածկ տարածքներ չկան: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը:

Հանրապետության «Կենսաբազմազանության պահպանության, վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արմավիրի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված 24 բուսատեսակ և 86 կենդանատեսակ գտնվում են անհետացման եզրին:

5.11.1. Բուսական աշխարհը

Բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանի, ավազավային մայր ապարների վրա բաց և մուգ դարչնային հողերի վրա զարգացած չոր տափաստանային լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսականության տեսակներով:

Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (Alisma lanceolatum), սովորական նետախոտը (Sagittaria sagittifolia L.), եռատերև նետախոտը (Sagittaria trifolia L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (Actinolema macrolema), աննշմարակող անհարթապտուղը (Aphanopleura trachisperma), երնջակ Վանատուրի (Eringium vanaturii), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (Amberboa moschata), խոզանափուշ բարակը (Caucinia tenella), կանգար տուրնեֆորի (Gundelia tournefortii), կաթնուկ Թախտաջյանի (Lactuca takhtadzhianii), խաչածաղկավորներից՝ լոջուն թռչնակտուց (Isatis ornitorhynchus), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (Sambucus tigranii), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (Acanthophyllum pungens), ալոխրուկ բունգեի (Allochrusa bungei), մեխակ Լիբանանի (Dianthus libanotis), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (Bienertia cycloptera), օշան Թամամջյանի (Salsola tamamschjanae), սպանախ քառաեզ (Spinacia tetrandra), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (Astragalus paradoxus), հաղհամեմ գլխիկավոր (Trigonella capitata), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (Frankenia pulverulenta), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (Nitraria schoberi), հացազգիներից՝ այծակն հաստ (Aegilops crassa), ցորեն արարատյան (Tritium araraicum), կարմրանազգիներից՝

կարմրան (Tamarix), կարմրան ութառեզանի (Tamarix octandra), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (Tetradiclis tanella) և այլն: Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, անտառահատում, ոռոգում և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային գոտու տեսակների ինչպես կազմը, այնպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը:

Ստորև ներկայացված են նկարագրվող տարածքում պահպանության կարիք ունեցող տեսակները: Աղյուսակում բերված է նաև յուրաքանչյուր տեսակի պահպանության

Աղյուսակ 8. Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված բուսատեսակները

Յ/Յ	Բուսատեսակների անվանումը		Պահպանության կարգավիճակը
	Լատիներեն	Հայերեն	
1	Acorus calamus L.	Խնկեղեգ ճահճային	1
2	Allium akaka Gmel	Սոխ ակակա	2
3	Amberboa moschata	Վարդատերեփուկ մուշկային	3
4	Bienertia cicloptera Bunge	Բիեներցիա շուրջաթև	1
5	Cicer anatolicum Alef	Սիսեռ անատոլիական	1
6	Convolvulus commutatus Boiss	Պատատուկ փոփոխական	2
7	Diospyros lotus	Խուրմա կովկասյան	1
8	Ferula persica Willd	Նարդես պարսկական	2
9	Hedysarum micripterum Bonge	Կուրկուրան մանրաթև	2
10	Inula aucherana DC	Կոմուխ Օշեի	1
11	Lactuca Takhtadzani Sosn	Կաթնուկ Թախտաջյանի	2
12	Linum seljukorum Davis	Կտավատ սելջուկյան	1
13	Merendera sobolifera Fischet C.A. Mey	Խլոպուզ ընդյուղակիր	1
14	Orchis laxiflora Lam	Խոլորձ Լոսրածաղիկ	1
15	Astragalus paradoxus	Գազ տարօրինակ	2

կարգավիճակն ըստ Կարմիր Գրքում կատարված դասակարգման (1-անհետացման վտանգի տակ գտնվող, 2- հազվագյուտ, 3- կրճատվող):

Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված բուսատեսակներից որոշները ներկայացված են ստորև.

*Acorus calamus L.**Allium akaka Gmel**Amberboa moschata**Convolvulus commutatus**Inula aucherana DC**Linum seljukorum Davis*

5.11.2. Կենդանական աշխարհը

Տարածաշրջանում դիտարկվում են միայն ողնաշարավոր կենդանիները: Տարածված են ցածր բարձրության (մինչև 1000 մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ:

Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ (82-ը՝ հանդիպում են նաև արտազոնալ բնակատեղերում), որոնցից 28 տեսակը՝ կաթնասուն է, 67 տեսակը՝ թռչուն, 15 տեսակը՝ սողուն և 3 տեսակը՝ երկկենցաղ:

Կաթնասուններից առավել հաճախ հանդիպում են կրծողների դասին պատկանող կենդանիները, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ:

Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով:

Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocivura* (սպիտակատամիկ), *Vulpes vulpes* L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Mucrotus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կոունկ) և այլն:

Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր կենդանիներից բնորոշ են՝ եղեգնակատուն, կոնչան բաղը, ճահճակուղբը, լճագորտը, ժայռային մողեսը, սովորական լորտուն, տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը, մոխրագույն առնետը, գայլը, աքիսը: Անողնաշարավոր կենդանիներից՝ ծովախեցգետինը, մրջյունը, մեղուն, ճիկը, մորեխը, կաղամբաթիթեռը, ճանճերը, մոծակները: Տարածաշրջանին բնորոշ է նդեմիկ կենդանիներից

է՝ հայկական որորը (*Larus armeniacus* But.): Հազվադեպ հանդիպում է նաև Արարատյան որդան կարմիր (*Porphyrophora hamnielii* Brandt):

Տարածաշրջանում հանդիպում են նաև որսի կենդանիներ՝ մշկամուկ, շնագայլ, խեցգետին (վայրի):

Մարդու գործունեության հետ կապված բազմաթիվ պատճառներով (բուսականության վերացում, ոռոգում, ավտոճանապարհների, օգտակար հանածոների արդյունահանում և վերամշակում, որսագողություն և այլն) կենդանիների թիվը կրճատվել է և շարունակում է կրճատվել:

Կենդանական աշխարհի պահպանության նպատակով դրանց զգալի մասը վերցված է հատուկ պահպանության տակ և գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր Գրքում:

Ստորև բերված են Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներն ըստ պահպանության կարգավիճակի (1-անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, 2-անհետացող, կրճատվող):

Աղյուսակ 9. Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակները

Զ/Զ	Բուսատեսակների անվանումը		Պահպանության կարգավիճակը
	Լատիներեն	Հայերեն	
1	<i>Erinaceus auritas</i> Gmelin	Լայնականջ ոզնի	1
2	<i>Rhinolophus euryales</i>	Հարավային պայտաքիթ	1
3	<i>Rhinolophus Mehelyi</i>	Մեհելիի պայտաքիթ	2
4	<i>Myotis nattereri</i> Kuhl.	Նատերերի արաքսյան, գիշերային չղջիկ	1
5	<i>Miniopterus schreibersi</i> Kuhl.	Սովորական երկարաթև չղջիկ	1
6	<i>Vormela peregusna peregusna</i> Guld.	Հարավլուսական խայտաքիս	1
7	<i>Pelecanus onocrotalus</i> Linnaeus	Վարդագույն հավալուսն	1
8	<i>Phalacrocorax pygmaeus</i> Linnaeus	Փոքր ձկնկուլ	2
9	<i>Egretta alba</i> Linnaeus	Մեծ սպիտակ տառեխ	1
10	<i>Plagadis falcinellus</i> Linnaeus	Քաջահավ	2
11	<i>Anser anser</i> Linnaeus	Մոխրագույն սագ	2
12	<i>Circaetus gollicus gollicus</i> Gmelin	Եվրոպական օձակեր	1
13	<i>Haematopus ostralegus longipes</i> Buturlin	Կոցար-կաչաղակ	2
14	<i>Aquila heliaca</i> sovigni	Սովորական բլրային արծիվ	1

Տարածաշրջանում հանդիպող և Կարմիր Գրքում գրանցված կենդանատեսակներից որոշները ներկայացված են ստորև.




Փոքր ձկնկուլ (*Phalacrocorax pygmaeus* Linnaeus)



Քաջախավ (*Plagadis falcinellus* Linnaeus)



Հարավային պալյտափիթ (*Rhinolophus euryales*)



Հարավուսական խայտափիս (*Vormela peregusna peregusna* Guld.)



Մոխրագույն սազ (*Anser anser* Linnaeus)



Եվրոպական օձակեր (*Circaetus gallicus gallicus* Gmelin)



Լայնական ղկի (*Erinaceus auritus* Gmelin)



Կոցար-կաչաղակ (*Haematopus ostralegus longipes* Buturlin)



Սովորական երկարաթև չոչիկ (*Miniopterus schreibersi* Kuhl.)



Վարդագուն հավալուս (*Pelecanus onocrotalus* Linnaeus)

5.12. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ների՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

Արմավիրի մարզում է գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Որդան կարմիր արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկն է: Գտնվում է ծովի մակարդակից 900-950 մետր բարձրության վրա:

«Որդան Կարմիր» արգելավայրը ստեղծվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի 1987 թվականի փետրվարի 2-ի թիվ 61 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա՝ Արագածի և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի՝ «ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ թիվ 830-Ն որոշման՝ զբաղեցնում է 219.85 հա տարածք:

